**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N ______________ «_____» _______________ 201 թ.

Ձեր

***<<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ի***
***Տնօրեն Ա. Ավետիսյանին***

***Հարգելի պարոն Ավետիսյան***

*Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության և <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ի միջև 23.03.2018թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2018-ՀՆ-14/1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ձեռքի օճառի մատակարարումն իրականացնել պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, պայմանների համաձայն:*

*Սակայն, ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն, Ձեր ընկերության կողմից մատակարարումն իրականացվել է ոչ պատշաճ՝ այն է մատակարարման ժամկետի խախտմամբ, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից <Мыловар-ДЗ> ООО գործարան հարցում կատարելու արդյունքում պարզվել է, որ տվյալ օճառի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին:*

*Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը ՀՀ ոստիկանությունը 2018թ. Հուլիսի 12-ից միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը, որի արժեքը կազմում է 594 000 (հինգ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:*

*Տեղեկացնում ենք, որ <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) բանկային օրվա ընթացքում*

*900011159044 հաշվեհամարին փոխանցել 2970 (երկու հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ՝ որպես տուգանք (պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև կգանձվի պայմանագրի կատարման ապահովման գումարը, որպես պայմանագրի կատարման ապահովում (տուժանք), որն էլ կազմում է 59 400 (հիսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:*

***Հարգանքով՝***

***Ոստիկանության գնդապետ*** ***Վարդան Մովսիսյան***

*կատ. Բ.Փահլևանյան*
*հեռ՝ 59-60-39*